

**ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանին  
Հանրային լրագրության ակումբի լրագրող Սոֆի Թովմասյանից**

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան,  
համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության  
ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ  
տեղեկատվությունը՝

COVID-19 համավարակի ընթացքում հաղորդակցության և իրազեկման գործընթացը  
կազմակերպելու համար ունեցե՞լ եք արդյոք ռազմավարություն, պաշտոնական  
փաստաթուղթ, որը ներառել է պլանավորված, հստակ քայլեր: Եթե՝ այո, ապա խնդրում եմք  
այն տրամադրել մեզ:

Հաղորդակցման ռազմավարության փաստաթղթի բացակայության դեպքում կարո՞ղ եք  
տրամադրել հաղորդակցման այն քաղաքականությունը, որը որդեգրվել է համավարակի դեմ  
պայքարի և հանրային իրազեկման համար:

*Հանրային լրագրության ակումբը Կորոնավիրուսային համավարակի համատեքստում  
իրականացնում է հետազոտություն, որը հետազայում օգնելու է բարելավել ՀՀ մարզային  
պետական կառույցների հաղորդակցային քաղաքականությունը՝ այն առավել  
ռազմավարական դարձնելով:*

Խնդրում եմք հարցմանը պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝



Սոֆի Թովմասյան

18. 12. 2020 թ.

**Հանրային լրագրության ակումբի մասին**

Հանրային լրագրության ակումբը Հայաստանում գրանցված հասարակական կազմակերպություն է: Մեր առաքելությունն է՝ խթանել խոսքի ազատությունը, բազմազանությունը և բազմակարծությունը Հայաստանում՝ զարգացնելով մասնակցային և հանրային թղթակցությունը, քաղաքացիական թղթակիցներին և պրոֆեսիոնալ լրագրողներին, լրատվամիջոցներին ու սոցիալական մեդիայի մասնագետներին, տեղեկատվական տեխնոլոգիաների և հասարակական այլ ոլորտների մասնագետներին կապող համագործակցության գրավիչ, աշխատանքային կամուրջներ ստեղծելով: